Վերապատրաստող

Կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ

<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Սովորողների ներգրավվածության ապահովումը տարբերակված ուսուցում մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝

Մարգարիտա Սարգսյան

ԴՊՐՈՑ՝

Վարդենիսի N3 հիմնական դպրոց

Վարդենիս-2022

Բովանդակություն

1.Ներածություն……..3
2.Գրական ակնարկ……5
3.Փորձարարական հետազոտություն
3.1 Խմբի նկարագիրը……..9
3.2 Փորձարարական դաս……10
3.3 Փորձարարական դաս 2……12
4.Վերլուծություն……1
3
5.Գրականության ցանկ……14
6.Հավելված……15

1.Ներածություն

Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է այդ համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող անձի ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Այդ պահանջը ենթադրում է այնպիսի կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ հաշվի է առնվում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները: Այս պարագայում աշակերտը հնարավորություն է ունենում իրեն լիարժեք դրսևորելու, ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու: Գիտենք՝ ցանկացած դասարան կազմավորվում է ըստ աշակերտների տարիքի (5.8-6տ.): Սակայն այդ երեխաների՝ միևնույն տարիքային խմբում լինելը, դեռևս չի ենթադրում զարգացման ու պատրաստականության միևնույն մակարդակներ: Նրանք ուսումնական գործընթացում ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և առաջ են շարժվում զարգացման տարբեր տեմպերով: Այս դեպքում ուսուցիչը հիմնականում ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտի վրա: Սա արհեստականորեն կասեցնում է ուժեղ աշակերտների զարգացումը, նրանք կորցնում են ուսման նկատմամբ հետաքրքրությունը, իսկ թույլ աշակերտները, կարծեք թե, «դատապարտվում են մյուսներից հետ մնալուն: Հարկ է նշել, որ նույնիսկ միջին կարողությամբ աշակերտներն իրարից տարբերվում են իրենց միջինությամբ. ունեն

տարբեր հակումներ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացների զարգացման տարբեր մակարդակներ և այլն:

Կարծում ենք՝ դասի ժամանակ, հատկապես ուսումնական գործունեության համընդհանուր /ֆրոնտալ/ ձևի կիրառման պայմաններում, ուսուցիչը դժվարանում է վերոնշյալ խմբերն առանձնացնել՝ հաշվի առնելով առանձին աշակերտների միջև առկա տարբերությունները: Իսկ դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝ նախնական գիտելիքների տարբերությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսի ընտանիքից է տվյալ երեխան/ նրա մտավոր կարողությունները, բառապաշարը, արժեքային համակարգը/,ճանաչողական կարողությունների տարբերությունները՝

- ընկալումը.
- կենտրոնացած ուշադրության տևողությունը.
- հիշողությունը
-մտածողությունն ու լեզուն՝
- լեզվական-խոսակցական
- տրամաբանական-մաթեմատիկական
- տեսողական
- շարժողական
- երաժշտական
- միջանձնային
- ներանձնային

Տարբեր բնավորության աշակերտներ ունեն տարբեր՝

- սովորելու ոճ
- մղում /դրդապատճառ/
- վերաբերմունք
- հետաքրքրություններ:

Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն են՝

-Միջմշակութայնությունը, որը հնարավորություն է տալիս սովորողին իրավահավասար գործընկեր լինել օտար լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում:

-Միջառարկայական ինտեգրում- օտար լեզվի ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են սովորողների կողմից աշխարհի և երևույթների ընկալմանը, տարբեր աղբյուրներից գիտելիքներ և գաղափարներ համադրելը:

-Բազմամակարդակությունը ձևավորել հմտություններ օտար լեզվով գրելու, խոսելու , կարդալու ունկընդրելու:

-Բազմագործառնություն- կարող է հանդես գալ և որպես ուսուցման նպատակ և որպես միջոց ձեռք բերել գիտելիքներ տարբեր բնագավառներից:

Օտար լեզուների ուսուցման հիմնական հեռանկարային նպատակը սովորողներին ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է: Քանի որ հայկական դպրոցներում աշակերտների համար դժվար է լիարժեք յուրացնել օտար լեզուն, հատկապես ցածր և միջին կարողությունների տեր աշակերտների համար այդ իսկ պատճառով իմ դասաժամերին տվյալ աշակերտների համար կիրառում են տարբերակված ուսուցում մեթոդը՝ նրանց լիարժեք ներգրավվելով ռուսաց լեզվի դասաժամերին: Այն սովորողները, որոնք թերանում են դասաժամերին նրանց համար հատկացրել եմ հատուկ ծրագիր դասապրոցեսին մասնակցելու համար:

- Տեքստային առաջադրանքեր, որոնք հագեցած են գունագեղ նկարներով:
- Տեքստային առաջադրանքներ, որոնք կզարգացնեն կարդալու կարողությունները, ճիշտ գրելու հմտությունները և մեծ հետաքրքրություն կցուցաբերեն առարկայի հանդեպ:

2.Գրական ակնարկ

Ուսուցիչն իր մասնագիտությանը լավ տիրապետելուց բացի պետք է գիտելիքներ ունենա նաև հարակից առարկաներից:Ընդհանրապես նա պետք է համակողմանի զարգացած անձնավորություն լինի:Իմացություն և դարձյալ իմացություն… ահա թե որն է կարևորագույնը ուսուցչի համար (Յու. Ամիրջանյան) :Ա.Ս.Մ Կարենկոն ասում էր “Աշակերտները կներեն իրենց ուսուցիչների և՛ խստությունը,և՛ չարությունը և նույնիսկ բծախնդրությունը,բայց չեն ների գործի վատ իմացումը”: Մանկավարժի մեջ նրանք ամենից շատ գնահատում են վստահ և հստակ գիտելիքը, կարողությունը,արվեստը,ոսկի ձեռքերը,քչախոսությունը և աշխատանքային մշտական պատրաստակամությունը:

Տարբերակված ուսուցման հիմնական նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման

Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է: Օրինակ՝

1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:

2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:

3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Կարող է լինել նաև այսպիսի մոտեցում,հաշվի առնելով երեխաների անհատական կարողությունները.

Ι ՄԱԿԱՐԴԱԿ.

Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը:

Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:

Իմանալ բառի հիմնական բաղադրիչները. արմատ, ածանց:

Կարողանալ բառի մեջ տարբերակել արմատը, ածանցը:

ΙΙ ՄԱԿԱՐԴԱԿ.

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:

Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:

Տարբերակել պարզ և բարդ բառերը:

ΙΙΙ ՄԱԿԱՐԴԱԿ

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:

Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:

Տարբերակել պարզ և բարդ բառերը:

Շատ ուսուցիչներ նախընտրում են տարբերակված մեթոդի այս ձևը՝

1.Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար:

2. Աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի: 2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին:

3.Աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում:Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգավորումներով առաջադրանքներ. գծագրեր, նկարներ: Աշակերտն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել դրանց օգնությանը, կարող է չդիմել:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները,ուսուցիչը պետք է հաշվի առնի

1.Անցյալ տարի տվյալ առարկան նույն թե տարբեր դասարաններում է սովորել

2.Արդյոք շատ է բացակայել դասերից

3.Ինչպիսի հաջողություններ է գրանցել ուսումնառության մեջ

4.Աշխատում են նույն թե տարբեր զուգընկերների հետ (Зинудин А.А. 2004):

Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են. սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել ընկերների հետ:

Այս կերպ երեխաները ձգտում են կատարել ամենաշատը կամ ամենաբարդը: Այսպես աշակերտների մեջ սկսվում է մրցակցություն և այն պատճառ է հանդիսանում,որ բարձրանա երեխայի հետաքրքությունը ուսման նկատմամբ: Սակայն կարող ենք նաև նշել,որ տարբերակված ուսուցումը ունի նաև իր բացասական կողմերը(Зинудин А.А. 2004) :Այսինքն ծանր,դժվար դասերը խթանում են ուժեղ աշակերտներին,իսկ թույլ աշակերտների մոտ հակառակը,դասը նրանց համար դառնում է ծանր պարտականություն:Տարբերակված ուսուցման խնդիր չի լինի,եթե նույն մակարդակի սովորողները սովորեն նույն խմբում,այս պարագայում նրանցից յուրաքանչյուրը իր նմանների մթնոլորտում իրեն լավ կզգա(Зинудин А.А. 2004):

3.Փորձարարական հետազոտություն

3.1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N3 հիմնական դպրոցի 4րդ-ի բ դասարանում: Այս դասարանում

սովորում են աշակերտներ,որոնց ունակությունները տարբեր են,այդ իսկ պատճառով որոշեցի հետազոտական աշխատանքս կատարել հենց այս դասարանում և հենց այս աշակերտներին ներգրավել դասապրոցեսին:4րդ-ի բ դասարանում սովորում են 30 աշակերտ՝ 14 աղջիկ,16 տղա,որոնք ունեն տարբեր առաջադիմություններ և հետաքրքրություններ:Այս դասարանի հետ հետազոտական աշխատանք չեմ կատարել և այս անգամ հետազոտական աշխատանք կատարելիս հիմնական շեշտը դրվեց որոշ աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսի մեջ:Այդ 4 աշակերտների համար ես մշակել եմ տարաբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով,խմբային աշխատանքների միջոցով,հարց ու պատասխանի միջոցով:

3.2 Փորձարարական դաս 1

Դասաժամը սկսեցինք տնային հանձնարարության ստուգումով: Բոլոր աշակերտները ընթերցեցին իրենց աշխատանքները,շտկվեցին սխալները, ցանկացող աշակերտները իրենք էին ուղղում իրենց

ընկերներին:Այնուհետև տրվեցին բանավոր հարցումներ սխալ կատարող աշակերտներին:
Դասը սկսվեց տեքստի ընթերցումով,դասի թեման էր “Трудолюбивые птицы”:
Դասը ընթերցվեց դասարանի գրեթե բոլոր աշակերտների կողմից (ընթերցեցին դերերով):Ավելի դժվար ընթերցվող,բարդ հատվածները ընթերցեցին միջին և ուժեղ կարողություններ ունեցող աշակերտները,իսկ ավելի թույլ կարողություններ ունեցող աշակերտներին հանձնարարվեց դասից գտնել և ընթերցել բոլոր թռչունների անունները (դասը հագեցած էր բազմաթիվ թռչունների անվանումներով):Նշենք,որ նախորդ դասին մենք արդեն պատկերների միջոցով ծանոթացել էինք թռչունների տեսակներին և նրանց անվանումներին:Դրա շնորհիվ հետազոտվող չորս աշակերտները,ովքեր գտնվում էին իմ ուշադրության կենտրոնում շատ լավ հիշում էին թռչունների անվանումները:
Այնուհետև ես արդեն նախօրոք պատրաստած քարտերը բաժանեցի աշակերտներին,իհարկե քարտերը պատրաստել էի երեք մակարդակների համար:
Ավելի ուժեղ կարողություններ ունեցող աշակերտներին հանձնարարեցի կազմել բառակապակցություններ տվյալ քարտում նշված թռչունների անվանումներով՝ аист,журавль,синица,воробей,кукушка,голубь и ворона:
Միջին կարողություններ ունեցող աշակերտներին հանձնարարեցի քարտում նշված թռչունների անվանումներում բաց թողնված տառերը լրացնել:
Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները,որոնք չորսն էին,կարդացին թռչունների անունները և սլաքներով միացրեցին համապատասխան պատկերներին:
Տարբերակված մեթոդով աշխատանքները հավաքելուց հետո հաղորդվեց նոր թեմա,որը սկսվեց թեմայի շուրջ զրույցով:Այնուհետև գրատախտակին գրվեցին և թարգմանվեցին դասի անծանոթ բառերը,որոնցով մի քանի աշակերտ կարողացան կազմել բառակապակցություններ:Այնուհետև սկսեցինք ընթերցել նոր թեման:Ընթերցելուց հետո հարցերի միջոցով ամփոփեցինք թեման պարզելու համար արդյոք աշակերտները ճիշտ յուրացրին դասը:Ակտիվ մասնակցող աշակերտները խրախուսվեցին:Իսկ իմ ուշադրության կենտրոնում գտնվող չորս աշակերտներին հանձնարարեցի և-ս մեկ անգամ իրենց ընկերների համար ընթերցել գրատախտակին գրված

նոր բառերը։Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով,որը դասարանում ընթերցվեց և բացատրվեց։Իհարկե մեկ վարժություն տրվեց ցածր առաջադիմություն ունեցողներին,իսկ երկու վարժություն՝միջին և բարձր ունակություններ ունեցողներին։

3.3 Փորձարարական դաս 2

Այսօրվա դասի թեման է <<Շնչավոր և անշունչ առարկաները >>:

Այս թեման դասագրքում ներկայացված էր տարբեր տեսակի վարժություններով և հագեցած էր գունագեղ նկարներով:Դասը սկսվեց տնային հանձնարարության ստուգումով ,ինչին հաջորդեց նախորդ դասի կատարած տարբերակված աշխատանքների քննարկումը: Երեխաները տարբերակված աշխատանքը կատարել էին շատ լավ,նույնիսկ թույլ աշակերտները:Աշխատանքի ադ ձևը նրանց այնքան էր դուր եկել,որ բոլոր աշակերտները պահանջում էին,որպեսզի նորից նմանատիպ աշխատանքներ կատարեն:Եվ ես հասկացա,որ այսպիսի աշխատանքը թույլ է տալիս լիարժեք ապահովել ամբողջ դասարանի ներգրավվածությունը:

Դասը սկսեցինք հետևյալ կերպ.գրատախտակը բաժանեցինք երկու մասի,առաջին մասում գրեցինք “ով” հարցը,երկրոդում՝ “ինչ”: Ես երեխաներին բացատրեցի անշունչ և շնչավոր առարկաների տարբերությունը ռուսաց և հայոց լեզուներում:Այն,որ հայոց լեզվում բոլոր կենդանիները պատասխանում են “ինչ” հարցին,իսկ ռուսաց լեզվում՝ “ով”: Օրինակ՝ “ի՞նչ-կով” , “кто-корова”:Իհարկե աշակերտները շատ զարմացան և ծիծաղեցին,որ կարելի է կովին ասել “ով”:

Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ մոտենում էր գրատախտակին և գրում մեկական անշունչ և շնչավոր առարկա:Ես ամփոփեցի դասը՝ անվանելով առարկաներ,որոնք աշակերտները պետք է տեսակավորեին ըստ շնչավոր և անշունչ առարկաների՝պատասխանելով ով թե ինչ: Այս դասին շատ մեծ սիրով մասնակցեցին նաև թույլ կարողություններ ունեցող աշակերտները:Ինչպես նշել էի դասը հագեցած էր տարբեր տեսակի վարժություններով:Ես ընտրեցի մեկ վարժություն թույլ աշակերտների համար և երկու վարժություն ուժեղ և միջին կարողություններ ունեցող աշակերտների համար: Վարժությունները կատարելիս շրջեցի շարքերով և ուղղեցի սխալները,որոնք շատ քիչ էին: Աշակերտները մի քանի առարկաների բացատրությունը չիմանալով հարցադրումներ էին կատարում,որպեսզի պարզեն առարկան շնչավոր է թե անշունչ: Այնուհետև աշակերտներին բաժանեցի կպչուն թերթիկներ և ուժեղ աշակերտներին խնդրեցի,որ կազմեն բառակապակցություններ մեկ շնչավոր և մեկ անշունչ առարկաներով,իսկ թույլ աշակերտներին հանձնարարեցի դուրս գրել երկու շնչավոր և երկու անշունչ առարկաներ: Թերթիկները հավաքելուց հետո տրվեց տնային հանձնարարություն,որը դարձյալ վերաբերվում էր թեմային:

4.Վերլուծություն

“Տարբերակված ուսուցում” մեթոդով աշակերտներին դասին ներգրավելու համար անցկացրեցի երկու դաս,որին մասնակցում էին թույլ,ուժեղ և միջին կարողություններ ունեցող աշակերտներ:Նրանք կատարեցին տարբեր տեսակի տարբերակված առաջադրանքներ, որոնց սխալները ուղղվեցին քննարկելով դասարանում իրենց մասնակցությամբ՝գրավոր և բանավոր տեսքով:

“Տարբերակված ուսուցում” մեթոդը հնարավորություն տվեց ամբողջ դասարանին ներգրավել դասապրոցեսին,ինչպես նաև հնարավորություն տվեց նույնիսկ ցածր կարողության տեր աշակերտներին լիովին ներգրավել դասին:Աշակերտները նույնպես գոհ մնացին այս տիպի դասից:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները,եկա այն եզրակացության,որ երեխաներին դասին ներգրավելը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1.Գրավոր և բանավոր հետադարձ կապ

2.Տարբերակված մեթոդով տարբեր վարժությունների կատարում՝ տարբեր առաջադրանքներով, նախատեսված երեք մակարդակների աշակերտների համար

3.Տարբերակված ուսուցում մեթոդների բազմապիսի կիրառում դասաժամերին

4.Տարբերակված թեստային առաջադրանքների կատարում

5.Թեմայի ամփոփում և ամրապնդում,հարցադրումներ անհատական աշակերտների հետ (ինչպես նաև դասի ամփոփում ընտրովի ընթերցանությամբ):

5.Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա. Սահակյան Ա.Ս.

“Մանկավարժություն” Մանկավարժ 2005

2. 3.Зинудун А.А.

“Дифференциация обучения” : сущность и формы,,Журнал директор школы 2004

3.А.С.М Коренко

6.Հավելված

Դասապլան 1

Առարկա՝	**Ռուսաց լեզու**	**Ամսաթիվ**	**15.05.2022**	**Կիսամյակ**	**2-րդ**	**Դասարան**	**4բ**
Խմբի բացվածք	**Աղջիկ:14 Տղա:16**						
Թեմա՝	**Трудолюбивые птицы**						
Օգտագործվող նյութեր՝	**Գրատախտակ,կավիճ,դասագիրք,տետրեր,բառատետր,կպչուն թերթիկներ,պաստառներ**						
Դասի նպատակը՝	**Դաստիարակչական** **Սեր դեպի բնությունը և աշխատանքը** **Իմանալ դասագրքում նշված թռչունների ռուսերեն անվանումները** **Զարգացնել կապակցված գրավոր խոսք կազմելու հմտություններ** **Սովորեցնել հարցերի միջոցով պատմել դասը**						
Ուսուցանման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	**Աշակերտը կկարողանա՝** **Թվել մի քանի թռչունների անուններ** **Կազմել բառակապակցություններ և նախադասություններ տրված բառերով** **Դուրս բերել տեքստից թռչունների անունները** **Գտնել կապեր գաղափարների միջև.** **Տարբերակել,կազմակերպել,կապակցել,համեմատել,հակադրել,առանձնացնել,փորձարկել,ուսումնասիրել,հարց ձևակերպել** **Մեկնաբանել մտքերն ու գաղափարները,դասակարգել,նկարագրել, քննարկել,բացատրել,ընտրել և թարգմանել**						

Գործողություններ (ժամտևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Առանցքային հարցեր, հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Մուտք ,ներկա-բացակա (2 րոպե) Տնային առաջադրանքի ստուգում (5 րոպե) Ընթացք (25-33 րոպե)	Աշակերտները լսում են և պատասխանում են տրված հարցերին,հիշում անցածը:	Մտագրոհ է անում բարդությունների վերաբերյալ հարցերի միջոցով,փորձում հիշեցնել նախորդ դասերին անցածը,լսում կարծիքներ:	1.Որոնք են անտառում բնակվող թռչունները

	Կարդում են հանձնարարված նյութը,քննարկում են զույգերով,ապա փորձում են հարցերի միջոցով պատմել դասը Կազմում են նախադասություններ, բառակապակցություններ նոր բառերով: Կարդում են տրված հանձնարարությունը, նշված բառերում լրացնել բաց թողնված տառերը: Ճիշտ գտնել համապատասխան բառերը և տեղադրել սունյակի մեջ :	Բացատրում է հանձնարարությունը, շրջում շարքերով, հետևում,օգնում դժվարացող աշակերտներին, առաջադրում հարցադրումներ: Բաժանում է քարտերը երեք մակարդակի աշակերտների համար,բացատրում է հանձնարարությունը ցույց տալով մեկ օրինակ գրատախտակին:	2.Թվարկեք նրանց անվանումները 3.Ինչով էր զբաղվում թռչուններից յուրաքանչյուրը
Ավարտ (5 րոպե)	Ներկայացնում են կատարված աշխատանքները, թերթիկների վրա գրում են ինչ սովորեցին,ինչը չհասկացան և հանձնում են:	Լսում է խմբերի ներկայացրած տարբերակները,ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը:Հանձնարարում է աշակերտներին թերթիկի վրա նշել	

		վերջնարդյունքները,նշել նաև թերըմբռնումները:	

Դասապլան 2

Առարկա՝	**Ռուսաց լեզու**	**Ամսաթիվ**	**13.03.2022**	**Կիսամյակ**	**2-րդ**	**Դասարան**	**4բ**
Խմբի բացվածք՝	**Աղջիկ:14 Տղա:16**						
Թեմա՝	**Շնչավոր և անշունչ առարկաներ**						
Օգտագործվող նյութեր՝	**Գրատախտակ,կավիճ,դասագիրք,տետրեր,բառատետր,կպչուն թերթիկներ,պաստառներ**						
Դասի նպատակը՝	**Սովորեցնել թե որ հարցերին են պատասխանում շնչավոր և անշունչ առարկաները** **Սովորեցնել տարբերությունը հայոց և ռուսաց լեզուներում շնչավոր և անշունչ առարկաների մեջ** **Սովորեցնել ճիշտ կազմել նախադասություններ և բառակապակցություններ շնչավոր և անշունչ առարկաներով**						

	Կարողանալ ճիշտ հարց ձևակերպել տվյալ առարկայի համար
Ուսուցման արդյունքներ,որոնք կհաստատեն,որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ Բացատրել որն է տարբերությունը հայոց և ռուսաց լեզուներում շնչավոր և անշունչ առարկաների մեջ Կազմել կապակցված խոսք,ճիշտ և տեղին կիրառելով անշունչ և շնչավոր առարկաները Տեքստից դուրս գրել առարկաների անվանումները և տարբերակել ըստ հարցերի (ով թե ինչ)

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչներ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)

Մուտք ,ներկա-բացակա (1 րոպե) Տնային առաջադրանքի ստուգում (2 րոպե) Սկիզբ (5-7 րոպե)	Բացում են դասագրքերը,պատրաստվում են նոր դասին:	Ողջունում է դասարանին, ստուգում է տնային հանձնարարությունը՝ բացատրելով անհասկանալի կետերը :	
Դասի ընթացք (10 րոպե)	Ամբողջ դասարանի հետ քննարկվեց թե անշունչ և շնչավոր առարկաները որ հարցին են պատասխանում: Այնուհետև ընթերցում են նյութը,քննարկում են զույգերով,ապա խմբով: Գրատախտակը բաժանում են երկու մասի՝ընթերցելով բառը	Ուսուցիչը լսում է աշակերտների ընթերցանությունը, հարցադրումներ է անում,քննարկում և բացատրում է թերի հասկացած հատվածները:	

	աշակերտը պետք է գրի այն համապատասխան սյունակում(ով է,ինչ է): Դասարանի կողմից ուղղվում են սխալները,կատարում են նշումներ իրենց տետրերում:		
10 րոպե	Տալ փոխադարձ հարցեր և մասնակցել դասին:	Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ:	1.Որն է շնչավոր և անշունչ առարկաների տարբերությունը հայերենի և ռուսերենի միջև: 2.Թվարկեք մի քանի առարկա և ասեք թե որ հարցին են նրանք պատասխանում
15 րոպե	Աշակերտները սկսում են աշխատել՝բաժանվելով երեք մակադրակների: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները կազմեցին նախադասություններ,միջին առաջադիմություն	Բաժանեց քարտեր, որոնց վրա խառը բառեր են գրված,և աշակերները պետք է տարբերակեին շնչավոր և անշունչ	

Տնային աշխատանք	ունեցողները պետք է դուրս գրեին շնչավոր և անշունչ առարկաները դասագրքից,թույլ աշակերտները պետք է դուրս գրեին երկու շնչավոր և երկու անշունչ առարկա: Ինքնուրույն աշխատանք իրենց ցանկությամբ,պետք է գրեն 10 անշունչ և 10 շնչավոր առարկաներ:	առարկաները և կազմեին մեկական նախադասություն : Ուսուցիչը հավաքեց թերթիկները:	